

ԱՔԵՏԱՐԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԲ. 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1892

ԹԻՒ 6

ՊԱՀԱՊԱՆ ՇՈՒՆԸ

Սյո երկեակ պատկերը հիմնուած է մեծ պահապան շան մը փորձառութեան վրայ որ կը պահուէր դաշնամուրի (էլան) գործարանի մը մէջ՝ գողերու դէմ պաշտպանելու համար զայն: Գիշերապահից (պէտի) նման իւր պաշտօնին ժամանակն էր զիշերը: Յերեկ ատեն աստ անդ կը վազէր ինչպէս որ ուզէր և շատ կը սիրուէր գործարաներէն. բայց մութը կոխելէն ետքը եթէ ոք փորձէր մտնել գործարանը, անտարակոյս պիտի ըլլէր շան ազդարարող հաշիւնը, և յետոյ, եթէ ետ չքաշուէր, շուտով պիտի խածնուէր անոր սուր ախտանքով:

Կերակուրն ընդունելու համար շունը կ'երթար մերձակոյ մնալաճառին խնուածը: Գործարանին քարտուղարը կը գրէր տոմսակ մը զոր շունը կ'առնուր բերանը, կ'երթար խանութը, կը մատուցանէր տոմսակը այն անձին որ կար կը կարէր: Սա ընդհանրապէս կ'ըլլար խանութպանին կինը, այլը դուրս ելած ըլլալով յաճախորդաց միս բաժնելու գործածուող սայլով: Օր մը շունը տեսնելով որ քարտուղարը թղթի մը կտոր նետած էր իւր գրասեղանին տակը, իւր մտին տոմսակը կարծելով զայն, սուտ և վազեց խանութ: Խանութպանը կը գտնուէր հոն, և տեսնելով որ այն թղթին կտորն էր հին և անարժէք տոմսակ մը, ոտքով զարնելով շան՝ դուրս հանեց զայն խանութէն իբրև խաբեբայ:



ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ԻԳ. ՍԱՂՄՈՍԻՆ ՎՐԱՅ

“Թէև մահուան շուքի ձորին մէջն ալ պտրտիմ, չարէն պիտի չվախնամ: Վասն զի դուն իմ հետս ես, քու ցուպդ ու դաւազանդ՝ անոնք իս պիտի մխիթարեն:”



ՊԱՀԱՊԱՆ ՇՈՒՆԸ

Եթէ խեղճ ոչխար մը կորնցունէր իւր ճամբան և իւր վրայ հասնէր գիշերուան խաւարը մինչ առանձին կը թափառի մութ ձորի մը մէջ, հեռի բլրէն ուր հօտը հանգիստ պառկած է, չէք կարծեր որ մեծապէս կ'ուրախանար զգալով հովուին գաւազանին չիտ մը երբ նա հասնէր իւր քով մութին մէջ զինք գտնելու համար: Եւ առկէ ետև

ո՛չ ապաքէն պիտի քալէր առանց երկուզի, մինչև անգամ թէպէտ զգար իւր ուսերուն վրայ ցուպին չիտ մը՝ որոյ նպատակն է զինք հովուին քով պահել: Անտարակոյս անոր մայելուն ձայները պիտի դադարէին և ինք պիտի վազվազէր կատարեալ վստահութեամբ մինչև որ միանար հօտին հետ փարախին մէջ ապահով:

«Բայց ես», կ'ըսէ մտացի փոքրիկ աղջիկ մը կամ պայծառ աչուի տղայ մը, «ես չեմ տեսներ թէ Սաղմոսին այդ խօսքն ինձ կը վերաբերի: Ես մահուան շուքի ձորին մէջ չեմ, և կը յուսամ թէ պիտի չըլլամ շատ տարիներ ևս:»

Մերելի փոքրիկ բարեկամներս, կը յուսամ թէ ձեր առջև կը կենան երջանիկ կենաց շատ տարիներ: Բայց երկրի վրայ ամենէն երջանիկ եղոյին համար անգամ կեանքը բոլորովին ազատ չէ փորձանքէ: Մինչև անգամ դուք ձեր ուրախ սրտով և զուարթ դէմքով իսկ արդէն հասկցած էք թէ յուսահատական վիճակներ և նեղութիւնք կրնան գալ որ և իցէ վայրկեան, և մարդ քանի մեծնայ և քանի ունենայ աւելի հոգեր և փորձութիւններ, շատ անգամ պատրաստ կ'ըլլայ հետեւցունել թէ նոյն իսկ կեանքն է ճանապարհորդութիւն դէպ ի մութ ձորը: Չենք կրնար ակնկալել թէ զերծ պիտի լինինք փորձանքներէ: Բայց պէտք չէ որ վախնանք անոնցմէ ծագող որ և իցէ չարիքէ՝ եթէ Հովին է մեր հետ: Եթէ նա մեր հետ է, մահն անգամ սարսափ չտոր:

Փոքրիկ աղջկան մը բտուեցաւ թէ պիտի մեռնէր: «Ես չեմ վախնար, վասն զի Յիսուս իմ հետս է:» Ըստ:

Չինուոր մը մահամերձ էր պատերազմի դաշտին վրայ: «Ըսէք մօրս», շնչեց իւր վրայ հակող բարեկամներուն, «ըսէք մօրս թէ ես մեռայ ան երկիրդ, վասն զի գլխեմ թէ որս եմ հաստացեր:»

Որդեսէր մայր մը կը պառկէր մահուան անկողնոյն վրայ: Իւր տկար խօսքերն էին, «Ո՛վ Աստուած, իմ զուակներս կը յանձնեմ քու ձեռքդ: չեմ վախնար չարիքէ: Գու ես իմ հետս և վստահ եմ թէ պիտի հոգաս զանոնք:»

Ահա չվախնալուն դաղանիքը — վրաստահութիւն Աստուծոյ վրայ:

«Վախցած ատենս քեզի կ'ապաւինիմ», կ'ըսէ Սաղմոսերգուն: Պէտք չէ որ վախնանք որ և իցէ բանէ մինչ կը քայլենք մեր Հովին քովէն:


Կան մանկունք — և ոչ միշտ շատ փոքրներ — որ կը վախնան մութէն: Անոնց վերաբերեալ խրատ մը կայ նոյն իսկ այս համարին մէջ: Յիշեցէք որ ձեր մարդասէր Հովիւր կը հոգայ ձեզ համար ինչպէս ցերեկուան լուսոյն մէջ նոյնպէս և գիշերուան խաւարին մէջ:

Խաւարը և լոյսը նոյն են իրեն համար: Ուրիշներ կը վախնան փայլակէն, և մինչև անգամ որոտումէն: Աստուած կը գտնուի ամէն որոտման մէջ: Նա կը նստի ջրհեղեղին վրայ: Վստահեցէք անոր և մի վախնաք չարիքէ:

Կան ոմանք որ դիւրաւ մը կը աագնապին և կ'երեւակոյցեն թէ նեղութիւնք մօտ են և պիտի յարձակին իրենց վրայ: Չեն կրնար ուրախութեամբ ապրիլ ներկային մէջ, ապագային երկիւղէն: Փրկիչն մեր կը գտնուի շտուգէ նոյն իսկ մտքի այս վիճակին դէմ երբ կ'ըսէ մեզ, «Վաղուան համար հոգ մի՛ ընէք:»

Ո՛հ, սրբափ աւելի բա է բտել, «Թէ և մահուան շուքի ձորին մէջն ալ պար-

կը գործէր յաջողապէս: Ամերիկան Եւրոպայի հետ կցելու առաջին ձեռնարկն եղաւ Սոյլըս Ու. Ֆիլս Ամերիկացոյն խնաման ներքև: Այս անձ կ'ապրի տակալին: Գործն սկսաւ 1857 ին և աւարտեցաւ 1858 Օգոստոս 13 ին: Իբր 20 օր գործեց պարանը և զրկուեցաւ 400 հեռագրալուր, որմէ ետքը արուեցաւ: Որովհետեւ պարանին համար աւելի քան 400,000 լիրա ծախք եղած էր, անմիջապէս չգրանուեցաւ դրամ երկրորդ ձեռնարկ մի ևս ընելու համար: Յաջորդ պարանը գրուեցաւ 1865 ին, բայց փրթաւ երբ իբր անոր կէսը գրուած էր: Ուրիշ մը յաջողապէս գրուեցաւ 1866 ին, և յետոյ նախորդ ստորուան մէջ փրթած



տիմ, չարէն պիտի չվախնամ: վասն զի դուն իմ հետս ես, քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք իս պիտի մխիթարեն», քան տաղնապիլ և վրդովիլ փորձանաց և չարեաց համար որ տակալին եկած չեն:

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԱՆԸ

Շատ տարիներ տեւեցին այն փորձերը որոց հետեւանքն եղաւ երկարական հեռագրին գիւտը, և քանի մը հնարիչ քօղնեցին անոր վերջնական յաջողութեանը: Հեռագրութեան առաջին անգամ գործածութիւնը տեղի ունեցաւ 1844 ին, երբ Ուաշինկիթըն և Պայլիմոն կայուեցան իրարու Մ. Մորս Ամերիկացոյն հնարած հեռագրութեամբ: Ադէլ քանի մը տարի ետքը գրուեցան ընդձովեայ (ժողուն տակէն անյնող) պարաններ, և 1854 ին Անգղիա և Գաղղիա կցուեցան իրարու Տովրի նեղուցին տակէն անյնող պարանով մը, որ

ՎԱԼԵՆՏԻՆ

պարանը հանուեցաւ ջրէն, վրան մաս կցուեցաւ և կատարելագործուեցաւ: Ուրիշ պարան մը 1869 ին գրուեցաւ Գաղղիայէ Ամերիկա: 1866 ին գրուած պարանին երկարութիւնն է 2,134 մղոն: Կը սկսի վալենչիայէ, իւրանտայի հարաւային արեւելեան անկեան մօտ գտնուող կըղզիէն, և կը հասնի Նիւ Ֆրանսուէնտ: Այնուհետեւ Նիւ Ֆրանսուէնտէ եղուարդ իշխանի կղզին կը հասնի կարճ պարան մը, և ուրիշ մը ևս՝ անկէ Ամերիկեան ցամաքը: Վալենչիա կը ցուցուի վերի պատկերին

մէջ: Պատկերին ձախակողման մտա գտնուող խումբ մը տուններն են Աւ. լանտեան Պարանի ընկերութեան շէնքերը: Բայ ի դէպ յԱմերիկա ձգուած այս երկու պարաններէն՝ կայ նաև ուրիշ մը որ կը հասնի հիւսիսային Գերմանիա, Էմպտէն, այնպէս որ լուրեր հնար է զրկել Եւրոպական ցամաքէն ուղղակի նիւ Եորք: Օրը իբր 3,000 հեռագրալուր կը զրկուի, և հնար է աւելի զրկել եթէ ուզուի: Մրցումը մեծապէս իջուցած է հեռագրութեան գինը, այնպէս որ այժմ կուսանդնու պուլսէ նիւ Եորք լուր կրնայ զրկուիլ մէկ բառին համար վճարելով երկու ֆրանքէն պակաս:

Պատկերին վարի մասը կը ներկայացունէ վալենշիոյ նաւահանգստին բերանը:

ԱՇՏԱՐԱԿ ԵՒ ԽԱՉԵՐ Ի ՔԼՈՆՄԱՔՆՈՅՍ

Ասկէ առաջ դրինք Տղայոց Աւետարանի մէջ Իռլանտայի համբաււոր բողոքակ աշարակաց միոյն պատկերը, հանդերձ տեղեկութեամբ թէ անոնք հաւանականապէս ինչ բանի կը ծառայէին: Հոս կայ ուրիշ մը որոյ վերի մասը թէպէտ փլած է, սակայն յուշանտա գտնուած աշարակաց ամենէն մեծերէն և ամենէն գեղեցիկներէն մին է: Կը կարծուի թէ շինուած է իբր հաղար սարի առաջ: Անոր շուրջ կը գտնուի հին գերեզմանատուն մը շատ մը հետաքրքրաշարժ տապանաքարերով, որոց ոմանց վրայ կանգնուած են քարէ խաչեր:

Կրնանք այցելել այսպիսի հին գերեզմանատուն մը առանց վիշտ զգալու: Այժմ չգտնուիր ոք որ ողբայ հոն թաղուածներուն վրայ: Հարիւրաւոր տարիներ առաջ անոնց մարմինները փոշի դարձած են, բայց այս յիշատակի քարերը տակաւին կը կանգնին, թերևս պահելով անուններ որք եթէ ոչ՝ պիտի մոռցուէին երկար ժամանակ առաջ:

Հաւանական չէ որ մեր գերեզմանաքարերը այդչափ ժամանակ կանգուն մնան, բայց կրնանք մեր ետևը թողուլ արձանագրութիւն մը բարի գործոց և մաքուր կենաց՝ որոց համար այլք շարունակեն օրհնել զվեղ ամենէն տոկուն ժայռից փշուրէն և նոյն իսկ աշխարհիս այրուելէն ետքը:

ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ՏՂԱՅՔ

Շուետացի տղայ մը ինկաւ պատուհանէն և ծանրապէս վնասուեցաւ, բայց իւր շուրթները ձեռքովը բռնելով ինք-

զինք զսպեց և չլացաւ: Կուսթավոս Ատոֆոս թագաւորը, որ տեսաւ անոր իյնալը, գուշակեց թէ այդ տղան պիտի լինէր տոկուն մարդ մը: Կատարուեցաւ գուշակութիւնը, վասն զի նա եղաւ համբաււոր զօրավարն Պատր: Խտայիոյ մէջ էր կին մը ինկաւ շուրթը և շատ վախցաւ: Չափահաս մարդոց բազմութենէն ոչ ոք համարձակեցաւ շուրթը նետուիլ զնա ազատելու համար. բայց տղայ մը ցատկեց շուրթը գրեթէ նոյն վայրկեանին որ կինն ինկաւ հոն և աշխատեցաւ զնա ջրէն վեր բռնել

կ'ուզէին ըսել անոր վրայով: Տղայ մը սովոր էր ճմլել ծաղիկները՝ առնելու համար անոնց ներկերը. ի թիւրոյ իւր հօր անակին ճերմակ կողմը ծածկեց ամէն տեսակ ներկեալ պատկերներով որոց վրայ հիացմամբ կը նայէին այն կողմի լեռնաբնակը: Այդ տղան էր մեծն Թիցիան:

Շերունի պատկերահան մը դիտելով փոքրիկ տղայ մը որ կը զբօսնուր նկարներ շինելով իւր ներկամանը, վրձինները, եռոտանին (բեռնաբեռ) և նստարանը գործածելով, ըսաւ, «Այդ



ԱՇՏԱՐԱԿ ԵՒ ԽԱՉԵՐ Ի ՔԼՈՆՄԱՔՆՈՅՍ, ՅՈՒԼԱՆՏԱ

մինչև որ աւելի զօրաւոր բազուկներ բռնեցին և դուրս հանեցին կինը: Ամէն մարդ ըսաւ թէ այդ տղան էր շատ համարձակ, շատ արագաշարժ, բայց նաև շատ յանդուգն և անխոհեմ, վասն զի կրնար խեղդուիլ ջրին մէջ: Այդ տղան էր Կարիպալտի, և կը տեսնէք որ ճիշդ այդպիսի էր նորա բողոք ընթացքը—թէ նա այնպէս արթուն էր բնաւորութեամբ և շոյտ շարժմամբ, որ ոչ ոք կրնար ըսել թէ երբ յարձակում մը պիտի ընէր իւր կարմիր շապիկ հագնող զինուորաց հետ. երբեմն այնպէս անխոհեմ էր որ իւր ընկեր հայրենասէրք կ'ուզէին որ իրենց հետ չգտնուէր. բայց նաև էր այնպէս քաջ և մեծահոգի որ բոլոր աշխարհ

տղան օր մը պիտի գերազանցէ զիս:» Եւ այդպէս եղաւ, վասն զի այն էր Միքայէլ Անճէլոյ:

Գերմանացի տղայ մը կը կարդար կիրքեր յուղող սոսկալի դէպքեր պատմող վէպ մը: Երբ անոր կիսուն հասաւ, ըսաւ ինքնիրեն, «Այս երբեք չըլլար, ես շատ կը յուզուիմ զայս կարդալով, յետոյ չեմ կրնար լաւ պարագիլ իմ ուսմանցս. ուրեմն այսչափս բաւական է:» Ըսաւ և գիրքը նետեց գետը: Այդ տղան էր Ֆիլիսթէ, Գերմանացի մեծ փիլիսոփան:

Նիւ Ինկլընտցի տղայ մը իւր ձեռք շինեց տաղաւար (շարք) մը իւր հօր արտին ետևը ճահիճի մը մէջ ուր ոչ տղայք և ոչ կովերը կը վրդովէին զինք: Այդ տաղաւարին մէջ կը կարդար գիր-

քեր, զոր օրինակ Լոբ փիլիսոփային «Մարդկային իմացականութիւն» գիրքը, կը գրէր շարագրութիւններ, կը դիտէր ամպերը և անոնց շարժումները, կը մտածէր փոթորիկի ժամանակ կայծակներուն և որսամանց ձայներուն վրայ, և կը ջանար զգալ թէ մտ էր Աստուած որ ստեղծեց բոլոր բաները: Այդ սողուն անունն էր ճոնաթհան Էտուրբազ:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՈՒՅՑՔ

Արևու ժամացոյցն է առաջին գործիքը որ ծառայած է իբրև ժամանակաչափ. գործիք՝ որոյ վրայ արևուն ստուերին շարժմամբ կ'իմացուէր ժամը քանին լինելը: Բայց առարկելի կէտ մը սա էր որ այդ տեսակ ժամացոյցը չէր կրնար գործածուիլ գիշերը կամ ամպամած օրերը: Ուստի արևու ժամացոյցի գործածութեան դարուց մէջ իմաստուն անձինք կ'աշխատէին հնարել աւելի աղէկ բան մը:

Այնուհետև հնարուեցաւ ջրի ժամացոյցը: Ջուրը կամաց կամաց կը կաթէր իւր վրայ նշանակեալ ասփճաններ ունեցող ամանն մը և այս կը չափէր ժամերը: Ջրի ժամացոյցը Հռոմ մտաւ յամին 158 նախ քան զՔրիստոս: Նախնի Յունաց գործածած ժամացոյցն էր այն:


Հետզհետէ զարգացումներ աւելցան ժամանակ ժամանակ, և ի վերջոյ փոխանակ ջրոյ վար իջնող ծանրութիւն գործածուեցաւ շարժելու համար ատամնաւոր անիւները որ առաջուց աւելցուած էին ժամացոյցին վրայ: Այնուհետև պէտք էր կանոնաւորիչ մը որպէս զի միօրինակ ըլլար դէպի վար շարժումը:

Կանոնաւոր ժամացոյցը առաջին անգամ հնարուեցաւ 1288ին: Յաջորդ դարուն մէջ ընդհանրացան ժամացոյցի աշտարակը: Ասոնք կառուցուեցան Սթրասպուրկի և ցամաքային եւրոպայի ուրիշ քաղաքներուն մէջ: Եւ այս կերպով ամէն մարդ կրնար տեսնել թէ ժամը քանին է առանց իւր տան մէջ ժամացոյց ունենալու: Ամենէն հռչակաւորն էր ի փարիզ գրուած ժամացոյցը 1379ին: Բայց եօթնևտասներորդ դարուն էր որ առաջին անգամ շինուեցաւ ճօճանակաւոր ժամացոյցը: Շինող ճարտարն էր Հոլանտացի մը Հայկընզ անուն: Հայկընզ իւր ժամացոյցը շարժման մէջ կը պահէր: ճախարակներու և անծայր լարի մը միջոցով:

Այժմ առ հասարակ գործածուած

ժամացոյցն է Հարիսընի հնարածը: Աշխատութեան բաժանումը լաւ կը լուսարանուի ժամացոյցի շինութեան մէջ: Շինուած պատրաստուած ժամացոյցը հասարակութեան յանձնող կամ զրկող արհեստաւորն ինք չլինէր անոր մեքենաներուն մէկն անգամ, այլ միայն իրարու հետ կը միացունէ ժամացոյցին զանազան մասերը զորս կ'ընդունի այլ և այլ տեղերէ: Շարժող մեքենաները կ'ընդունի Անգղիայէ, զըսպոնակը, ապակին, ամանը և թուանշանաց տախտակը՝ ուրիշ տեղերէ: այնուհետև կը կատարէ իրեն վերաբերեալ գործը, և ահա ժամացոյցը պատրաստ է:

Երբ կը քննէք ժամացոյցի մը մանրամասն մեքենաները, խորհեցէք որ դարերու աշխատութեամբ յառաջ եկած են անոնք:



Մ Ի Ե Ի ՆՈՅՆ ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ

Հետաքրքիր անձ մը կը պատմէ իւր հետագայ փորձը.

Առի մեծ սարդ մը ազօրիքի մը ներքև գտնուած իւր ոտայինն և դրի զայն տաշեղի մը վրայ և յետոյ տաշեղը իբրև նաւակ դրի լճակին խաղաղ ջուրերուն վրայ: Սարդը իւր այդ նաւակին չորս կողմը ժուռ եկաւ, իւր դիւրքը գննեց շատ խնամով, և երբ քաջ հասկցաւ որ ինք բոլորովին չըջապատեալ էր ջրով և ջրին եզերքէն իբր մէկ կանգուն հեռի կը գտնուէր, նայեցաւ փնտռեց ամենէն մօտ եղող ցամաքը: Անմիջապէս թել մը նետեց որպէս որ կրնար հեռի՝ օդին մէջ և հովին ուզողութեամբ: Թելը շուտով հասաւ ցամաքը և գնաց փակաւ խոտի կոթերուն: Այնուհետև սարդը դարձաւ չորս կողմը և ճշմարիտ նաւաւորի մը նման իւր թաթիկներով սկսաւ քաշել իւր պարանը խնամով մինչև որ նստակն սկսաւ շարժիլ դէպի ցամաքին կողմը. տաշեղին շարժումը որքան կ'արագանար, ինքն ալ այնքան կ'արագցունէր իւր թաթիկներուն շարժումը որպէս զի թելը ձգտեալ (կեղծ) և ուղիղ մտար և չդպչէր ջրին: Շուտով մը հասաւ եզերքը և արագ մը հաստատուն գետնին վրայ ցատկելով ճամբոյ ելաւ դէպ իւր բնակարանը:

Խորհելով որ թերևս այս սարդն ունէր մանաւոր ճարտարութիւն և էր բացառութիւն իւր սեռին մէջ, անոնցմէ քանի մը հատին վրայ ըրի նոյն փորձը: Բայց անոնք բոլորն ալ ցամաքն հասան մի և նոյն կերպով:

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեծ քաղաքի մը մէջ բնակող բարի հարուստ մարդ մը իւր տան դրան վրայ դրաւ սա աղդը.

«Ով որ ստակ չունի և անօթի է, թող հոս գայ և ուտէ»:

Շատ մարդիկ կ'անցնէին անկէ և կարդարով այդ գիրը կ'ըսէին, «Այդ ի՞նչ տարօրինակ մարդ է որ կ'ընէ այդպիսի առաջարկութիւն մը»: Աղքատ մը եկաւ և նայեցաւ աղդին վրայ և ըսաւ, «Ես անօթի եմ, բայց եթէ չեմ կրնար ներս մտնել առանց բան մը վճարելու, չեմ ուզեր մտնել, վասն զի երբեք չունիմ ստակ»: Եւ անցաւ գնաց իւր ճամբան: Աղքատ կին մը կեցաւ և նայեցաւ աղդին վրայ և ըսաւ, «Երանի՜ թէ կարող ըլլայի երթալ ներս և ուտել. բայց աւա՜ղ որ հանդերձներս ցնցոտի են և աղտոտ: Ես յարմար չեմ, տանուտէրը զիս դուրս պիտի վաճառէ: Եւ անցաւ գնաց իւր ճամբան: Այսպէս շատեր անցան անկէ իրարու ետևէ, անօթի, սովալլուկ, աղքատ և թշուառ, և չմտան ներս՝ խնճոյքին սրահը:

Ի վերջոյ փոքրիկ աղայ մը որ կ'անցնէր անկէ, տեսաւ աղդը, «Այդ ե՛ս եմ», աղաղակեց: «Անօթի՛. ես անօթի եմ»: Աղքատ. ես աղքատ եմ: Ստակ չունի՛. աղէկ. ես չունիմ ստակ, այդ ալ ինձ համար գրուած է: Ներս պիտի մտնեմ ես»:

Եւ մտաւ ներս. և ոչ միայն լաւ ճաշ մը ըրաւ, այլ հագուեցաւ, և ընդունեց գեղեցիկ տուն մը ուր յաւիտեան երջանիկ պիտի ըլլար:

Ով տղոյք և աղջիկներ, գիտէ՞ք ինչ է այս պատմութեան նշանակութիւնը: Ձեզ կը յարմարի՞ այն: Կայ՞ ձեռնէ զատ նաև ուրիշ մը որ մեծ կարօտութիւն ունի այս խնճոյքին և հանդերձներուն և գեղեցիկ տանը և կը սպասէ ձեզ որ պատմէք անոնց վրայով: Ի՞նչպէս կ'ընէք թել այս բանը:



Ամերիկայի Գրականութեան Կոմիտէ, Արևմտահայաստանի Բ. ԿՐԻՆ Տնօրէն, Ս. ՊԱՐՆԵՄ Գրական Իսան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Լ. ՅԱՅՐ ՊՅՈՒՆՅԱՆ